ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԶԵՅԹՈՒՆՈՒՄ ԴՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՐՆԵՑԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԱԶ ՊՈՂՈՍՅԱՆ

Սկսած 1409 թ. Զեյթունի մասին պահպանվել են զգալի վկայություններ, սակայն զեյթունցիների վճարած հարկերի մասին մեկ տեղեկություններ քիչ են հասել։ Աղասին իր աշխատության մեջ, հավանաբար ավանդությունից ելնելով, նշում է, որ օսմանյան սուլթան Սելիմ I գրավեց Կիլիկիան (1515) և վերացրեց Թուրքմենական Զյուլ Գատիրյան ցեղի տիրապետությունն այնտեղ։ Ըստ նույն ավանդության, Զեյթունի հայերն օգնել էին օսմանյան բանակներին և այդ պատճառով էլ նրանց գավառակի սահմաններն ընդարձակվել են՝ հասնելով մինչև Կայան գյուղաքաղաք։ Օսմանյան կառավարությունը զեյթունցիների վրա 5000 դահեկան հարկ է դրել[1]։ Այդ ավանդության համաձայն, սուլթան Սուլեյմանի (1520—1565) ժամանակ Զեյթունի քահանաներից մեկը մեկնել է Կոստանդնուպոլիս և վավերացրել վերևում նշված հարկի մասին եղած պայմանը։ Սակայն զեյթունցիները սահմանված այդ հարկը չեն վճարել և միայն որոշ քանակի անասուններ էին տալիս պետական պաշտոնյաներին և «Զեյթունի իշխանները կվայելեին անկախ իշխաններու պայմաններ, իրենք տուրքեր կհավաքեին և կառավարության չէին ուղարկեր, կրնեին ինչ որ իրենց հաճելի էր»[2]։

Զեյթունցիների վճարած հարկի մասին առաջին վավերագիրը սուլթան Մուրադ IV-ի (1623—1640) հրովարտակն է, որն առաջին անգամ հրատարակել է Մ. Սեմերճյանը (Զեյթունցի)։ Այդ հրովարտակում ասված է. «Զեյթուն գավառակը քարոտ ըլլալով, բնակիչք ընդարձակ հողեր չունենալուն, իրենց պարենը հայթայթելու համար շատ դժվարություններ կկրեն, այնպես որ ցորեն, գարի և այլ ամեն ընդեղեններ դուրսերեն բերելու հարկադրված են, ուստի հիշյալ գավառակը, որ կայսերական կառավարության մասը կազմող Մարաշի կառավարության տակն է, որպես արտոնացյալ երկիր զերծ կկացուցանեմ գլխահարկի տուրքեն, զոր պարտավոր էին վճարել կայսերական գանձուն, միայն տարվե տարի 15.000 դահեկան (զուրուշ—Հ. Պ.) որոշյալ քանակությամբ տուրք մը պարտին հատուցանել Այա Սոֆիա մզկիթի հոգաբարձուին, որպեսզի կանթեղներուն համար ձեթ առնելով լուսավորվի մզկիթը. 15.000 դահեկան ալ իրենց եկեղեցյաց կանթեղներուն համար վճարեն, որ անոնք ալ լուսավորվին։ Թե՛ Այա Սոֆիա մզկիթին և թե իրենց եկեղեցիներուն՝ որպես կրոնական տուրք (վագֆ) համարվի այս գումարը. ասկե ավելին պահանջելու համար իմ հաջորդներես ոչ ոք համարձակի կայսերական շնորհացս արժանացող Զեյթոն գավառակի վրա ծանրանալու։ Բաց հայսմա-

---

[1] «Զեյթունի պատմագիրք», Բուենոս Այրես, 1960, էջ 105։

[2] Նույն տեղում։

նե սույն գավառի մեջ թուրք պաշտոնյա չի պիտի գտնվի, նույնիսկ ճանապարհորդությամբ այնտեղ հանդիպող թուրք պաշտոնյան քաղաքեն ներս չմտնելով՝ պետք է դուրս տեղ մը պառկի, այնպես որ բնավ մեկ կողմե մը վնաս չհասցնի այն բացառիկ ու ինքնավարական դրության, որը շնորհած եմ անոնց՝ ինքզինքեին կառավարելու առանց արտաքին միջամտության»։

Կ. Պոլիս, 29 շեվվալ 1036 Քրիստոսի 1618 փետրվարի 17[3]

1950-ական թվականներին այս հրովարտակը համարվեց «կեղծ և մտացածին»[4], ելնելով նրանից, որ Մուրադ IV-ը թագավորել է 1623—1640 թթ. և, բնականաբար, չէր կարող 1618 թ. տալ այսպիսի հրովարտակ։ Սակայն իրականում Հեջրիի 1036 շեվվալը ոչ թե 1618 թվականն է, այլ 1626—1627 թ., երբ Մուրադ IV-ը իշխում էր։

Այսպիսով, սկսած 1626—1627 թ. մինչև 1865 թ., մինչև թուրքական առաջին կայսակամի մուտքը, զեյթունցիները վճարել են ընդամենը 30 հազար դահեկան հարկ, որից 15 հազարն Այա Սոֆիայի մզկիթին և 15 հազարն իրենց եկեղեցիներին։ Միաժամանակ նշենք, որ այս հրովարտակի արտոնությամբ լեռնականները մինչև 1865 թ. ապրել են ինքնուրույն կյանքով, ոչ ոք իրավունք չի ունեցել մտնելու նրանց գավառակը։ Ըստ Ղ. Ինճիճյանի, զեյթունցիները «...ամենեքին արք կորովիք քաջասիրտ պատերազմողք ի մանկութենէ, հաջողակ ի զինաշարժութիւնս, և ընտիր այրուձիր»[5]։ Այնուհետև Ղ. Ինճիճյանը գրում է, որ նրանք XVIII դ. վերջին չէին հնազանդվում Մարաշի փաշային «ոչ տան նմա հարկս, ոչ սովորական տուրս, ագանին արգելեալ զգեստս, հնչեցուցանեն համարձակ զանգակս ի յեկեղեցիս, և ինքեանք դատին զամենայն դատաստանս իւրեանց...»[6]։

Ինչպես երևում է Ղ. Ինճիճյանից բերված քաղվածքներից, զեյթունցիները քաջ կռվողներ էին, և իրենց պատերազմական մարդանքները տտանում էին սկսած մանկական հասակից, լավ ձիավոր մարտիկներ էին և վարժ հրաձիգներ։ Նրանք Մարաշի փաշային հարկ չէին վճարում, հագնում էին քրիստոնյաների համար Օսմանյան Թուրքիայում արգելված հագուստներ, նրանց եկեղեցիների զանգակատներից համարձակորեն հնչում էին զանգակները և հանցագործներին դատում էին իրենք և ոչ թե թուրքական դատավորները։

Ըստ Մ. Սեմերճյանի՝ լեռնականները հրովարտակով նախատեսված հարկի կեսը՝ 15 հազար դահեկանը, իրենք էին ուղարկում Կ. Պոլիս և «Մարաշի կառավարության, ինչպես նաև թուրք հասարակության նախանձը կշարժեին իրենց վրա»[7]։

Սակայն, եթե Մարաշի փաշան շահագրգռված էր Զեյթունն իրեն ենթակա տեսնելու և այնտեղ ունենալու իր կառավարչին, ապա թուրք հասարակությունը նախանձում էր զեյթունցիներին, քանի որ գավառակն ուներ 30—35

---

[3] Զեյթունցի, Զեյթունի անցյալն և սերկայեն, Վիեննա, 1900, էջ 31—32։

[4] Վ. Մելիքսեթյան, Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, Երևան, 1950, էջ 214—215, նույնի՝ Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960, էջ 12։

[5] Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին. Վենետիկ, 1806, էջ 374։

[6] Նույն տեղում, էջ 375։

[7] Զեյթունցի, նշվ. աշխ., էջ 32։

հազար բնակիչ, սակայն վճարում էր ընդամենը 30 հազար դահեկան հարկ։ Դա նշանակում է, որ յուրաքանչյուր զեյթունցուն ընկնում էր մոտ մեկ դահեկան հարկ, մինչդեռ գրսի հայերին ու մնացած ազգերին պատկանող գյուղացիները մի քանի տասնյակ անգամ ավելի հարկ էին վճարում։

1780 թ. Մարաշի Օմեր փաշան արշավեց Զեյթուն և պահանջեց որ «տուրքը իրեն վճարենք»[8], սակայն լեռնականները ոչ միայն հրաժարվեցին այդ անել, այլև սպանեցին փաշային ու ցրեցին նրա բանակը։ 1782 թ. զեյթունցիներին հպատակեցնել չհաջողվեց նաև Օմերին հաջորդած Ալի փաշային[9]։ 1808 թ. Մարաշի Գալանտեր փաշան ևս ցանկացավ գրավել Զեյթունը և պահանջեց վճարել «60 քսակ (մեկ քսակը՝ 500 դահեկան—Հ. Պ.) կամ 30.000 դահեկան տուրք...»[10]։ Ինչպես տեսնում ենք, փաշան պահանջում էր ոչ միայն Այա Սոֆիայի մկկիթին վճարվող հարկը, այլև այն տասնհինգ հազար դահեկանը, որ զեյթունցիները թողնում էին իրենց եկեղեցիներին։ Սակայն լեռնականները հրաժարվեցին փաշայի պահանջը կատարելուց։

1819 թ. ապրիլին Կոստանդնուպոլիս կանչվեց Սսի Աշապահյան Կիրակոս կաթողիկոսը, որը սկսած 1797 թ. Սսի աթոռակալն էր։ Նա այնտեղ շինարարական մեծ աշխատանքներ էր կատարում և դպրոց էր բացել։ Թուրքական իշխանավորները նրա մասին մայրաքաղաք էին ուղարկել տեղեկություններ, որ «կատուցանէ զամրոց մեծ ի Սիս, աշտարակս անմատչելիս և ի Բրգունս բարձրաբերձս...»[11], իբր թե 40 հազար կաղակներ տեղավորելու համար։ Կաթողիկոսը մեղադրվում էր ինչպես զեյթունցիների, այնպես էլ ռուսական ցարի հետ կապիր ունենալու մեջ[12]։

Ըստ Գ. Գալուստյանի, Կոստանդնուպոլսում եղած ժամանակ կաթողիկոսին հաջողվում է ոչ միայն հերքել այդ մեղադրանքները, այլև զեյթունցիների հարկը իջեցնել 20 հազար դահեկանի, իսկ մի տարի հետո լեռնականները 15 հազար դահեկան հարկ են վճարում[13]։ Սակայն ինչպես Գ. Գալուստյանի, այնպես էլ Մ. Սեմերճյանի մոտ ոչ մի խոսք չկա այն մասին, թե մինչև կաթողիկոսի Կոստանդնուպոլիս գնալը հարկը որքան էր բարձրացել և թե նրանք ո՞ւմ վճարեցին այդ 20 հազար դահեկան հարկը։

«Զեյթունի պատմագրքում» նշվում է, որ պալատում իր անմեղությունը հաստատելուց հետո Կիրակոս կաթողիկոսը միջնորդեց ի Նպաստ Զեյթունի, «անոր գթությունը հայցելով այս աղքատ ժողովրդյան վրա, և հաջողեցավ քսան հազար դահեկանի իջեցնել կառավարական տուրքը, որ երեսուն հազարի բարձրացած էր»[14]։ Այս հավաստումը խոսում է այն մասին, որ հարկը 30 հազար դահեկանի էր հասել, սակայն վճարել էին արդյոք այն դրանից առաջ լեռնականները, թե ոչ, մենք չգիտենք։ Գիտենք, որ վճարեցին 20 հազար դահեկանի իջեցված հարկը, սակայն ո՞ւմ, այդ էլ հայտնի չէ։

---

8 Նույն տեղում, էջ 33։

9 Նույն տեղում, էջ 36։

10 Նույն տեղում, էջ 38։

11 «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ», գրեց Բաքգեն Ա. աթոռակից կաթողիկոս, Անթիլաս, 1939, էջ 571։

12 Նույն տեղում, էջ 547։

13 Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 127։

14 «Զեյթունի պատմագիրքը», էջ 180։

Գ. Գայուստյանի մոտ հանդիպում ենք նաև այն տեղեկությանը, որի համաձայն, երբ Կիրակոս կաթողիկոսին առաջարկվել է «երաշխավոր և փոխանորդ բլալ զեյթունցիներու հարկին», նա պատասխանատվությունից հեռու լինելու միտումով մերժել է, ասելով թե «տերության կենքով ընկճել չի կրցածը ինքը հնազանդեցնելու միջոց չունի»[15]։ Որ Կիրակոս կաթողիկոսը մերժել է վճարել զեյթունցիների 20 հազար դահեկան հարկը, վկայում է նաև «Կիլիկիա» գիրքը, ուր ասված է, թե նա «մերժում է զեյթունցիների կողմից տարեկան 20.000 ղուրուշի մի գումար վճարելու առաջարկությունը, որ իրան անում էին օսմանյան նախարարները»[16]։

Զեյթունցիների հարկի բարձրացման մասին տեղեկություններ կան նաև Բ.Կյուլեսերյանի «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» աշխատության մեջ։ Այստեղ նշված է, որ զեյթունցիների հարկը բարձրացել էր 50 հազար դահեկանի։ Կաթողիկոսին առաջարկում են վճարել հարկը, սակայն նա մերժում է։ Առաջարկվում է գոնե 20 հազար դահեկան վճարել, սակայն կաթողիկոսը նորից է մերժում[17]։

Վերը բերված փաստերից երևում է, որ լեռնականների հարկը կրկնակի, եռակի էր դարձել, սակայն մենք տեղեկություն չունենք այն մասին, թե նրանք հարկը ո՞ւմ պետք է վճարեին՝ նորից Այա Սոֆիայի մզկիթի՞ն, թե՞ կառավարությանը։

Ըստ Զեյթունցու, լեռնականները մի տարի միայն վճարեցին 20 հազար դահեկան հարկը, իսկ դրանից հետո՝ հաջորդ տարվանից սկսած «սուլթան Մուրադի հրովարտակին համեմատ 15.000-ական դահեկան միայն հավաքվելով՝ կղրկվեր Պոլիս...»[18]։

XIX դ. առաջին տասնամյակներին Զեյթունի վրա Մարաշի փաշաները շատ հարձակումներ կատարեցին։ Այդ ժամանակաշրջանում զեյթունցիների վճարած հարկերի մասին տեղեկությունները, ցավոք, սակավ են։ Պահպանվել է միայն վկայություն այն մասին, թե 1830 թ. Զեյթունի իշխանները Այա Սոֆիային վճարվող հարկը ուղարկել են զեյթունցի Մանուկ Պերսեյանի միջոցով, որն այն հանձնել է մզկիթի հոգևոր պետին[19]։

Զեյթունի իշխանները տեսնելով, որ կես դարից ավելի, սկսած 1780-ական թվականներից, Մարաշի փաշաներն ամեն անգամ արշավում են զեյթուն, առիթ դարձնելով հարկն իրենց վճարելու խնդիրը, որոշում են զեյթունցի Դելի Քեշիշի (Օհան) միջոցով վերավավերացնել սուլթան Մուրադ IV-ի հրովարտակը։ Օհանը 1833 թ. մեկնում է Կ. Պոլիս և ներկայանում Ստեփան Աղավնի պատրիարքին, որը, սակայն, նրան բանտարկում է։ Ըստ Զեյթունցու, ազատվելով բանտից, Դելի Քեշիշն իր խնդրագիրը հանձնում է սուլթան Մահմուդ II-ին (1808—1839), երբ վերջինս անցնում էր քաղաքի հրապարակներից մեկով։ Զեյթունցին նշում է, որ «և իրոր, նրեք օր վերջ վավերացյալ հրովարտակը պատրիարքարան եկավ հատուկ պաշտոնեյի մը ձեռամբ...»[20]։

---

15 Գ. Գայուստյան, նշվ. աշխ., էջ 705։

16 «Կիլիկիա», Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, 1894, էջ 330։

17 «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ», էջ 550—551։

18 Զեյթունցի, նշվ. աշխ., էջ 42։

19 Նույն տեղում, էջ 46։

20 Նույն տեղում, էջ 64։

1835 թ. Մարաշի փաշան բանտարկում է Զեյթունի Սուրենյան իշխանին, պահանջելով 7 տարվա չվճարած հարկը՝ տարեկան 30 հազար դահեկան[21]։ Սակայն լեռնականներն ի պատասխան դրա, առևանգում և բանտարկում են Մարաշի երեելիներից շատերին, և փաշան ստիպված ազատում է Սուրենյանին, իսկ զեյթունցիները՝ Մարաշցիներին։

Ըստ Զեյթունցու, 1852 թ.՝ հրովարտակի վերահաստատումից 19 տարի հետո, Մարաշի Մուստաֆա փաշան զեյթունցիներից պահանջեց անվճար թողած 150.000 դահեկան տուրքը[22], սակայն լեռնականներն այն հրաժարվեցին վճարել։ Զեյթունցու մոտ պահպանված այս տեղեկությունը չի խոսում այն մասին, թե լեռնականները դրանից առաջ ո՞ւմ էին վճարում հարկը։ Եթե չէին վճարել, ապա ինչո՞ւ էր այն 19 տարում 150 հազար դահեկան դարձել։ Դրանից առաջ՝ 1841 թ., հասեք անունով մի զինվորական պաշտոնյա 500 հոգով եկել էր Զեյթուն և պահանջել 5 տարվա հարկը, սակայն այն չէր վճարվել, ընդհակառակը, զինվորականն ինքն էր ստիպված եղել 10 ոսկի վճարելով՝ ազատվել լեռնականներից[23]։

Ըստ Վ. Լանգլուայի, որը 1852—1853 թթ. ճանապարհորդել է Կիլիկիայով և Տավրոսյան լեռնաշղթայի մի մասով, Զեյթունի բնակիչները հարկ էին վճարում Սսի կաթողիկոսին և նրա շրջակայքում տիրապետող Կոզան օղլուներ թուրքմենական ցեղին[24]։ Սակայն Վ. Լանգլուայի հաղորդած տեղեկությունը մասամբ է համապատասխանում իրականությանը։ Զեյթունցիները Սսի կաթողիկոսին եկեղեցական հարկ են վճարել, իսկ Կոզան օղլուներին ոչ մի հարկ չեն վճարել։ Բանն այն է, որ Վ. Լանգլուան չի եղել Զեյթունում։ Շրջելով Կիլիկիայում հայագետ գիտնականը հասել է Սիս և ապա ցանկացել է մտնել Զեյթուն, սակայն դա նրան խորհուրդ չեն տվել, ասելով, թե Զեյթունի բնակիչներն իրենց քաղաքի «դռները փակում են ուրևիցե օտարականի առջև, և թե վտանգավոր է գաղտագողի մտնելը»[25]։ Եվ այսպես, իր տեղեկությունները Զեյթունի մասին Վ. Լանգլուան հավաքել է Մարաշի հայերից և ոչ թե զեյթունցիներից։ Ավելին, նա գրում է, որ լեռնականները կատարյալ ազատություն են վայելում, և «Օսմանյան դռան հարկ տալուց բոլորովին ազատ են»[26]։

1862 թ. դեկտեմբերի վերջին զեյթունցի Մովսես քահանայի գրած տեղեկագիրը վկայում է, որ «մինչև այս վերջին դարս այս նահանգիս (Զեյթունի գավառակի —Հ. Պ.) Օսմանյան տերությունեն ունեցած անկախությունը կատարյալ էր...»[27]։

1859 թ. (սուլթան Մեջիդի ժամանակ) Զեյթունի երկու եկեղեցականներ՝ Մեսրոպ վարդապետը և Մովսես քահանան, ջանացին նախկին հրովարտակը նորից վավերացնել, սակայն դա նրանց չհաջողվեց և թուրքական կառավարությունը հարկը հասցրեց 24.000 դահեկանի։ 1860 թ. հունիսին Մարաշի-

21 Նույն տեղում, էջ 56։
22 Նույն տեղում, էջ 74։
23 Նույն տեղում, էջ 81—82։
24 «Զեյթունի պատմագիրքը», էջ 112։
25 Նույն տեղում, էջ 126։
26 Նույն տեղում, էջ 112։
27 Նույն տեղում, էջ 135։

խուրշիդ փաշան 12 հազար զորքով հարձակվեց Զեյթունի վրա, պահանջելով 12 տարվա հարկը[28]։

Զեյթունցին իր գրքի 101 էջում նշում է, որ Մեսրոպ վարդապետը և Մովսես քահանան 1859 թ. չկարողացան վերահաստատել հրովարտակը, իսկ 102 էջում գրում է, որ լեռնականները խուրշիդ փաշային ցույց տվեցին երեք սուլթանների հրովարտակների պատճենները, ասելով, որ իրենք միայն 30.000 դահեկան տուրքը կարող են վճարել։ Այստեղից երևում է, որ լեռնականներն ամեն ինչ արել են, որպեսզի ավել տուրք չվճարեն։

Հայտնի է, որ Օսմանյան Թուրքիայում հարկերի բաշխումը կախված էր տվյալ փաշայի կամքից։ Մենք արդեն նշեցինք, որ Զիա փաշան 1852 թ. պահանջեց 150.000 դահեկան տուրք։ Պահպանվել է տեղեկություն և այն մասին, որ 1856 թ. Մարաշի Մինիպ փաշան նորից պահանջել է նույն քանակությամբ տուրք[29]։

Երևանի Մատենադարանում է գտնվում 1851 թ. մայիսի 20-ին Զեյթունից Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին ուղղված մի նամակ, որի տակ կան Զեյթունի չորս իշխանների և Հովհաննես արքեպիսկոպոսի ստորագրություններն ու կնիքները։ Այս վավերագրից հայտնի է դառնում, որ Զեյթունի իշխաններից մեկը՝ Մահտեսի Հոաննես Շովրողլույանը, կոչվել է իշխանապետ, իսկ մնացածները՝ աղա Մարտիրոս Սուրենյանը, իշխան Մահտեսի Աստվածատուր Յաղուպյանը և Աստվածատուր Ենիկտունյանը՝ իշխաններ։ Այս նշանակում է, որ Զեյթունի կառավարությունը կազմված էր չորս իշխաններից, որոնցից մեկն իշխանապետն էր կամ ավագը, նախագահը։ Այդ կառավարության մեջ էր նաև Գառնեցի Հովհաննես արքեպիսկոպոսը։ Նրանք Ներսես Աշտարակեցուն գրում էին, թե «ոչ կարեմք յըկանապես գրել գել և մուտ մեր մի ըստ միոչէ»[30]։ Ուրեմն վախեցել են, որ նամակը կարող է ընկնել թուրքական ատիճանավորների ձեռքը։ Այդ նամակը վկայում է, որ Զեյթունի իշխանները «են պայազատք և արքայալուն սեռք, ամենայն ուրեք հռչակաւոր անուանեալք, և մինչև ի յարքունիս պալատն Օսմանյան...»[31]։ Համաձայն նամակի՝ նրանք կանչվել են Կոստանդնուպոլիս և «արքայական,—ինչպես ասված է նամակում,— հրամանաւ զիշխանսն յատեան զակոնական կանոնաւ հարցաքննեալ և տեղեկացեալ գել ամենայն իրացն եղինի վերայ մեր դաշինք կապակցութեամբ արքայական դրոշմամբ և բերմանօք, վերստին դարձուցին առ ի Զեյթուն քաղաքս մեծ պատուով արքայապսակ նշանօք...»[32]։

Երևանի Մատենադարանի արխիվում պահպանվել է նաև մեկ այլ չափազանց ուշագրավ վավերագիր, ուղղված Ներսես Աշտարակեցուն, որն ուղարկել է Հովհաննես արքեպիսկոպոսը՝ 1852 թ. մարտի 10-ին։ Այս վավերագրի «Բայց արքայ թագավորի վերկին վաթսուն քիսէ ըստակէ կլտըրուածը» հատվածից երևում է, որ կառավարության կողմից Զեյթունի տարեկան հարկը սահմանված էր 60 քիսե կամ 30.000 դահեկան, և որ այդ ժամանակ Զեյթուն «արքա-

28 Զ ե յ թ ո ւ ն ց ի, նշվ. աշխ., էջ 101։

29 Մ. Ն ո ւ ր ի խ ա ն, Պատմություն ժամանակակից. մասն Բ, Վենետիկ. 1896, էջ 822։

30 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 158, վավ. 39։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

չէն եկեալ սպասաւորքն, յՕսմնեան այսինքն Զեյթունեան նյություսին համարն չափ խնդրելով կամին զոռով չափեն դուրս աւելի առնենք»[33]։ Ուրեմն, իշխանների վերադարձից հետո Զեյթուն էին եկել սուլթանի ուղարկած ատրճանավորները, որոնք ժողովրդից ավելի տուրք էին պահանջել և քանի որ ժողովուրդը հնարավորություն չուներ վճարելու, ապա այդ մասին էլ Զեյթունի հոգևոր առաջնորդը տեղյակ էր պահում ամենայն հայոց կաթողիկոսին։

Սակայն օսմանյան կառավարությանը միայն հարկը չէր հետաքրքրում, այլ նաև այն ինքնավարությունը, որ ունեին լեռնականները։ Մարաշի Ազիզ փաշան գերմանական ճանապարհորդ Պառթիին 1861 թ. ասել է, որ «Կիլիկիո լեռներուն մեջ կան քանի մը ապստամբ ժողովուրդ, հուսամ թե քիչ ատենեն զանոնք անհետ կանենք»[34]։ Ովքե՞ր էին «քանի մը ապստամբ ժողովուրդը», որոնց մասին ակնարկում էր Մարաշի նոր նշանակված փաշան։ Դրանցից մեկը զեյթունցիներն էին, իրենց հինգդարյա ինքնավար կյանքով, իսկ մյուսը Սիս ու Հաճըն քաղաքներում և նրանց շրջակայքում ապրող Կոզան-օղլուներ թուրքմենական ցեղը, որը սկսած 1640 թ. նույնպես ինքնավար կյանքով էր ապրում և, վերջապես, Զեյթունից ոչ շատ հեռու ընկած Ագչե-դաղում բնակվող քրդերն էին, որոնք նույնպես չէին ենթարկվում օսմանյան կառավարությանը։

Ազիզ փաշան 1862 թ. արշավելով Զեյթուն, լեռնականներից պահանջեց անցած տարիների 1.777.097 դահեկան հարկը և նույն տարվա համար 95296 դահեկան[35]։ Նախ, որտեղի՞ց մեկ տարվա այդ հարկը, որն ավելի քան երեք անգամ ավելին էր քան կառավարության նշանակած 60 քիսե կամ 30 հազար դահեկան հարկը։ Երբ բաժանում ենք այս թվերը, ստացվում է ավելի քան 18 տարվա հարկ, եթե, իհարկե, հաշվում ենք 95296 դահեկանի չափով։ Մեր կարծիքով Ազիզ փաշան մի տարվա հարկն իր կամքով ավելի քան երեք անգամ ավելացրել էր և պահանջել մոտ 20 տարվա հարկ, որպեսզի այդ ահռելի գումարը լեռնականները չկարողանան վճարել և ինքն առիթ ունենա հարձակվելու Զեյթունի վրա ու մեկընդմիշտ վերջ տա նրա ինքնավար վիճակին։ 1862 թ. տպագրված մի հոդվածից էլ երևում է, որ Ազիզ փաշան զեյթունցիներից 1000 քսակ (500.000 դահեկան) գումար է պահանջել[36]։ Ազիզ փաշան Զեյթունի գավառակում գտնվող Ալապաշ (Արեգին) գյուղն ավերելուց, ս. Փրկչի վանքը թալանելուց և 200 հոգի սպանելուց հետո պատգամավորություն է ուղարկում Զեյթուն և պահանջում հարկը։ «Զեյթունի պատմագրքից» չի երևում թե նա ինչքան հարկ է պահանջել, սակայն լեռնականների պատասխանը («եթե դուք մեր բոլոր գյուղը վերի վայր առնեք՝ քրքրեք, կեսն ևս գտնելու չեք այն գումարի, որ պահանջում եք մեզանից»[37] ցույց է տալիս, որ նա պահանջել էր վճարել հսկայական գումար։ Զեյթունցիներն Ազիզ փաշային պատասխանում են, որ կարող են միայն 128 հազար դահեկան վճարել, որից 25 հազարը՝ դրամով[38]։ Դա Ազիզ փաշային չի բավարարում և նա մեծ թվով զորքով հարձակվում է զեյթունցիների վրա։ Սակայն նրա ուժերը ջախջախ-

---

33 Նույն տեղում, թղթ. 163, վավ. 31։

34 «Արձագանք», 18. XII. 1895։

35 Մ. Նուրիխան, նշվ. աշխ., էջ 822։

36 «Զեյթունի պատմագիրք», էջ 152։

37 Նույն տեղում, էջ 219։

38 «Արձագանք», 18. XII. 1895։

վում են և նահանջում, Զեյթունում թողնելով ունեցած երկու թնդանոթները։ Դրանից հետո զեյթունցիները հավաքում են 30 հազար դահեկան գումար և փաշայից խլած երկու թնդանոթների հետ միասին ուղարկում Մարաշ։

Զեյթունի 1862 թ. այս հերոսական ապստամբության հաղթանակից հետո մինչև 1865 թ. այսպես կոչված «Զեյթունի գործը» շարունակվեց և ձգձգվեց։ Վերջապես, լեռնականները ստիպված եղան ընդունել թուրքական առաջին կայմակամին, որով էլ փաստորեն վերջացավ նրանց հինգդարյա ինքնավար վիճակը։ Նորեկ կայմակամը կառուցեց այսպես կոչված «կառավարական տունը» և մի մզկիթ՝ գյուղաքաղաքում ապրող 24 տնտեսություն կազմող լազերի և եկվորների համար։ Այսպիսով, լեռնականները սկսեցին ղեկավարվել Օսմանյան կայսրության օրենքներով, դարձան պետության այնպիսի հարկատուներ, ինչպես մնացած քաղաքացիներն ու գյուղացիները։ Կայմակամի հետ Զեյթուն եկան նաև թուրք հազարապետ, դատավոր և մի բարենորոգիչ[39]։ Սրանք սկսեցին հաշվառել բնակիչների անշարժ և շարժական գույքը և թուրքական հարկատվության անտանելի լուծը դրվեց լեռնականների վզին։ Թուրք պաշտոնյաները զեյթունցիներից պահանջեցին մի նոր հարկ՝ գլխահարկ (բեդել կամ պետելյե ասքիարյե)։ Այս հարկը ռայային սարկական վիճակում պահող մի միջոց էր, որը շատ հին ժամանակներում անվանվել է նաև խարաջ։ Այն XVIII դ. վերջերին մեկ շնչի համար 10 դահեկան էր, 1834 թ. հասավ 20, իսկ Ղրիմի պատերազմից հետո՝ ավելի քան 27 դահեկանի[40]։ Զեյթունում այդ հարկը ընդհանուր առմամբ կազմեց 100.000 դահեկան[41]։ Զեյթունի բնակիչները 50 հազար դահեկան հարկ էին վճարելու այծերի համար, իսկ տերունական հարկ՝ 25 հազար դահեկան։ Այսպիսով, եթե զեյթունցիները նախկինում վճարում էին 30 հազար դահեկան հարկ, ապա 1865 թ. սկսած միայն այս 3 հարկերի դիմաց վճարելու էին 175.000 դահեկան[42]։ Սրանք դեռ օրինական հարկերն էին, իսկ անօրինականներն ավելի շատ էին, չհաշված կաշառակերությունը, հարստահարությունները և կամայականությունները, որոնք թուրքական պաշտոնյաների հետ մտան Զեյթուն։

1875 թ. Զեյթունի բնակիչներն ապստամբեցին, թուրքական իշխանավորներին դուրս վռնդեցին իրենց գավառակից և երեք տարի ապրում էին ինքնավար կյանքով։ Մեր ունեցած տվյալներով այդ ապստամբության նախօրյակին լեռնականները թուրքական կառավարությանը պետք է վճարեին 370 հազար դահեկան հարկ[43]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կառավարությունը Կիլիկիա և Զեյթուն է ուղարկում մի հանձնաժողով՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և կոնկրետ առաջարկներ անելու համար։ Իր այս քայլը կառավարությունը համարում էր նաև Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը «կենսագործելու» մի փորձ, որի նպատակը, ինչ խոսք, նաև լեռնականներին ժամանակավորապես պոռթկումից զերծ պահելն էր։

Հանձնաժողովը տեղում ծանոթանալով իրավիճակին, զգալի չափով իջեցրեց առևտրական և կալվածքների տուրքերը (154.775-ից 51.184 դահեկանի).

---

39 Զեյթունցի, նշվ. աշխ., էջ 125։

40 Խաժակ, Հարկերը Տաճկաստանում, Բաքու, 1904, էջ 34—35։

41 «Զեյթունցիք և յուսավորչական Հայքս», Կ. Պոլիս, 1866, էջ 20։

42 Նույն տեղում։

43 «Մշակ», 12. I. 1879։

այնուհետև ժողովրդին ազատեց գլխահարկից, որը 164.611 դահեկանի էր հասել։ Հանձնաժողովը 8 անուն տուրքեր, որոնց գումարը կազմում էր 21.935 օսմանյան ոսկի, վիջեց։ Այդիներից ստացված տասանորդը 50 հազար դահեկանից հասցվեց 4587 դահեկանի[44]։ Սակայն սրանք, ինչպես նշվեց, լեռնականներին ժամանակավորապես լռեցնելու նպատակով կատարված դիջումներ էին։ Հարկերը հետագայում ավելացվեցին և զեյթունցիները 1895 թ., նկնելով ստեղծված վիճակից, ապստամբեցին։ Հերոսական այս ապստամբությունը տևեց մի քանի ամիս և վերջացավ սուլթանի ու զեյթունցիների միջև կնքված պայմանագրով, որի համաձայն, լեռնականները 3 տարով ազատվում էին բոլոր տեսակ հարկերից, իսկ այն հարկերը, որոնք չէին հավաքվել, չեղյալ էին հայտարարվում[45]։

Մեր բերած այս բոլոր տվյալները վերաբերում են միայն աշխարհիկ հարկերին, սակայն ինչպես ամենուրեք, այնպես էլ Զեյթունում, ժողովուրդը հարկեր էր վճարում նաև եկեղեցուն։ Լեռնականների մոտ հոգևոր պետը մինչև թուրքական տիրապետության հաստատումը և դրանից հետո էլ, ինչպես տեսանք, մասնակցել է աշխարհիկ գործերին։ Զեյթունի վանքը նույնպես մի փոքրիկ ֆեոդալական հաստատություն էր և ուներ իր կալվածքները։ Սակայն մինչև 1850-ական թվականները զեյթունցիների վճարած հոգևոր հարկերի մասին քիչ տեղեկություններ ունենք։ Մինչև XIX դ. կեսերը վանքի վանահայրերը եկեղեցու ունեցվածքի հետ վարվել են այնպես, ինչպես իրենք են ցանկացել և նրանց գործերին ոչ ոք չի միջամտել։ Ժողովուրդը միշտ էլ կանոնավոր կերպով վճարել է պտղի և աթոռի հարկերը։ Ինչպես եկեղեցիներին, այնպես էլ վանքերին տրվել են մեծ քանակությամբ նվերներ։ Եկեղեցական հարկերի մեջ կային նաև ուխտագնացության, մատաղի, հիվանդության, մահերի, խելագարության կապակցությամբ տրվող գումարներ։ Մինչև 1900 թ. Զեյթունի վանքի վանահայրը «վանքը հայրենի ժառանգության մը պէս ամուր գրկած՝ չուզեր, որ մարդ անցնի վանքին դռնեն, կամ թուչուն մը իսկ թռչի մոտերեն»[46]։ Դարավերջին Զեյթունի ավագանու որոշմամբ ստեղծվում է հոգևոր խորհուրդ, որը տնօրինում էր վանքի հասույթները և հաշվետվություն էր տալիս եկեղեցու ունեցվածքի մասին։ Այդ խորհուրդը գործեց մինչև 1915 թվականը։

О НАЛОГАХ, СУЩЕСТВОВАВШИХ В ЗЕЙТУНЕ

АЙКАЗ ПОГОСЯН

Резюме

О налогах, существовавших в Зейтуне, сохранились весьма скудные сведения. Единственным документом является Манифест, изданный султаном Мурадом IV в 1626—1627 гг., согласно которому зей-

44 «Զեյթունի պատմագիրքը», էջ 339—340։
45 Զեյթունցի. նշվ. աշխ., էջ 71—73։
46 «Զեյթունի պատմագիրքը», էջ 829։

тунцы должны были платить налог размером 30 тыс. динаров в год. Этим Манифестом зейтунцы получили относительную независимость.

В конце XVIII в. турецкие паши Мараша пытались подчинить себе зейтунцев и увеличить налоги, однако их попытки не увенчались успехом. В 1862 г. после подавления героического зейтунского восстания налоговый гнет усилился: только по трем основным налогам они должны были платить 370 тыс. динаров, не считая других многочисленных податей.